



Հաստատում եմ՝

Տնօրեն 

## ՎԱՐՔԱԿԱՆՈՆ

ՄՈՍԿՎԱՅԻ Մ.Վ. ԼՈՄՈՆՈՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ  
ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻՆ ԿԻՑ Ա.Հ. ԵՐԻՑՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ  
ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ

### 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 1.1 Սույնով սահմանվում են Վարժարանի սովորողների վարվելակերպի և գործունեության անհրաժեշտ ու նախընտրելի սկզբունքները Վարժարանում և նրա տարածքում:
- 1.2 Փաստաթղթում սահմանված սկզբունքները հարգելը և պահպանելը Վարժարանի յուրաքանչյուր սովորողի պարտականությունը և դպրոցում արժանապատիվ կեցության ապահովման երաշխիքն են:
- 1.3 Սահմանված սկզբունքները պահպանելով՝ սովորողները մեծապես նպաստում են դպրոցում կրթական բարենպաստ միջավայրի ստեղծմանը, յուրաքանչյուր սովորողի իրավունքների իրացմանը, ինչպես նաև ընդհանուր առաջընթացի ապահովմանը:
- 1.4 Վարքականոնի սկզբունքները չեն հակասում ՀՀ և ՄԱԿ-ի կողմից ընդունված երեխաների իրավունքների մասին օրենքներին և հռչակագրերին:

### 2. Սովորողի կարիքները, նպատակները, իրավունքները և պարտականությունները Վարժարանի տարածքում

Յուրաքանչյուր սովորող դպրոց է գալիս՝ տրամադրված իր ուսումնական գործունեության խոհեմ կազմակերպման և ուսուցիչների, մյուս սովորողների ու Վարժարանի ստորաբաժանումների աշխատակիցների նկատմամբ բարեկիրթ վերաբերմունքի բարձր գիտակցությամբ:

#### 2. Սովորողը պարտավոր է՝

- 2.1 դասին ներկայանալ դասի զանգը հնչելուց առաջ՝ առանց ուշացման
- 2.2 ունենալ ուսումնական նպատակներով իրեն հարկավոր գրենական պիտույքներ, ուսումնական նյութեր, գրքեր, կրթական այլ ռեսուրսներ,
- 2.3 ներկայանալ աշակերտին վայել համազգեստով՝ դասական ոճով,

- 2.4 սահմանված կարգով հանձնել հեռախոսը (կամ հեռախոսները), եւ հեռահաղորդակցության բոլոր միջոցները,
- 2.5 դասին ներկայանալ օրվա դասանյութին պատրաստ,
- 2.6 դասի ընթացքում լավագույնս կատարել ուսուցչի կողմից իր եւ դասարանի առջեւ դրված առաջադրանքները: Դասի ընթացքին եւ բովանդակությանը չվերաբերող ցանկացած զբաղվածություն տվյալ դասի ընթացքում արգելվում է, եթե դա չի թույլատրել ուսուցիչը,
- 2.7 դասամիջոցի ընթացքում որեւէ պատճառով հաջորդ դասից ուշանալու հավանականության պարագայում թույլտվություն ստանալ տվյալ դասի ուսուցչից, դասդեկից կամ տնօրինությունից,
- 2.8 դասասենյակի սեղանների վրա չթողնել հեղուկով լցված որեւէ տարա, իսկ սնունդը, մինչեւ դասի սկսվելը, դնել պահարանում: Սեղանին չթողնել նաեւ այլ պարագաներ, եթե այլ բան չի նախատեսում ուսուցիչը,
- 2.9 խնամքով վերաբերվել վարժարանում եւ վարժարանին պատկանող հարակից տարածքում առկա գույքին ու պարագաներին և չվնասել դրանք,
- 2.10 պահպանել մաքրություն՝ հոգ տանելով միջավայրի հոգեւոր եւ նյութական բնականոն վիճակի պահպանման համար,
- 2.11 ունենալ ֆիզկուլտուրայի դասերին և սպորտային խմբակներին մասնակցելու համար անհրաժեշտ համազգեստ,
- 2.12 հաշվետու օրը դասի չհաճախելու հավանականության դեպքում ծնողի միջոցով նախապես տեղեկացնել դասդեկին կամ տնօրինությանը այդ մասին:
- 2.13 հանդիսատեսի կարգավիճակում գտնվելու դեպքում միջոցառման սկզբի վերաբերյալ հայտարարությունից հետո դադարեցնել զրույցները եւ այլ զբաղմունքները և կատարել միջոցառման կազմակերպիչների կողմից հանդիսատեսին ուղղված հրահանգները,
- 2.14 չծխել վարժարանի տարածքում, վարժարան չբերել և չօգտագործել արգելված իրեր (ալկոհոլային խմիչքներ, թմրանյութեր, պայթուցանավտանգ, սուր կտրող-ծակող առարկաներ և այլ նյութեր, որոնք կարող են վնասել շրջակա միջավայրին և այլ աշակերտներին),
- 2.15 չկիրառել ֆիզիկական ուժ, չգործադրել հոգեբանական ճնշում այլ անձանց վրա, չօգտագործել նրանց արժանապատվությունը վիրավորող բառեր և արտահայտություններ,
- 2.16 չաղմկել, չվիճել և չխանգարել այլ անձանց հանգիստը:

### **3. Սովորողն իրավունք ունի**

- 3.1 ուսումնական նպատակներով օգտվելու վարժարանի գրադարանից և տեխնիկական միջոցներից,

- 3.2 օգտագործելու էլեկտրոնային տեխնիկան ուսումնական եւ հանգստի նպատակներով՝ չխանգարելով ուսուցչի, որեւէ սովորողի կամ այլ անձի հանգիստը եւ բնականոն գործընթացը դպրոցում<sup>1</sup>,
- 3.3 դասամիջոցին հանգստանալ՝ այլոց հանգիստը չխանգարելով,
- 3.4 մասնակցելու վարժարանում գործող բոլոր խմբակների արտադասարանական դասընթացներին,
- 3.5 առաջադրվելու և/կամ ընտրվելու աշակերտական խորհրդի անդամ և/կամ նախագահ,
- 3.6 մասնակցելու վարժարանի կողմից կազմակերպված կամ վարժարանին վերաբերող որեւէ միջոցառման, հանդես գալու միջոցառում կազմակերպելու նախաձեռնությամբ, ինչպես նաև կազմակերպել եւ անցկացնել այդ միջոցառումը այլ սովորողների եւ առնվազն մեկ ուսուցչի հետ,
- 3.7 ներկայացնելու վարժարանը տարբեր մրցույթներում, փառատոներում, օլիմպիադաներում՝ տնօրինության համաձայնությամբ,
- 3.8 վարժարան բերել սնունդ, նաև այլ առարկաներ եւ նյութեր, որոնք կիրառվելու են ուսումնական գործընթացում, հանգստի կազմակերպման կամ այլ միջոցառման ժամանակ՝ նախապես դրանց ձեռի ու բովանդակության մասին տեղեկացնելով ուսուցչական անձնակազմին,
- 3.9 վարժարան բերել հեռահաղորդակցության համար իրեն հարկավոր սարքեր՝ սահմանված կարգով դրանք անվտանգության աշխատակցին հանձնելու պայմանով<sup>2</sup>,
- 3.10 դասամիջոցին վերցնելու նախապես հանձնած հեռախոսը եւ կամ հեռահաղորդակցության այլ միջոցները՝ նույն դասամիջոցի ընթացքում դրանք վերադարձնելու պայմանով միայն,
- 3.11 լքելու վարժարանի տարածքը դասերի ընթացքում միայն ծնողի իմացությամբ, դաստիարակչի և տնօրինության գրավոր կամ բանավոր թույլտվությամբ,

#### 4. Սովորողները խրախուսվում են՝

- 4.1 ուսման բարձր առաջադիմություն ցուցաբերելու համար,
- 4.2 տարբեր մրցույթների, միջոցառումների, փառատոների, օլիմպիադաների, նախագծերի մասնակցելու համար,
- 4.3 հասարակական ակտիվություն ցուցաբերելու համար:

#### 5. Պատասխանատվությունը և պատժի կիրառումը վարքականները խախտելու դեպքում

<sup>1</sup> Օրինակ դասամիջոցին, եթե երաժշտություն է միացված, հեռուստացույցի ձայնը այնքան բարձր չլինի, որ լսելի չլինի որեւէ մեկի խոսքը կամ «զանգի» ձայնը:

<sup>2</sup> Այդ սարքերի օգտագործումն ու տնօրինումը դպրոցում կանոնակարգված է ստորև բերված սկզբունքներով:

- 5.1 վարքականոնները խախտելու համար սովորողի նկատմամբ կարող են կիրառվել պատասխանատվության հետևյալ ձևերը.
  - 5.1.1 նկատողություն (գրավոր)
  - 5.1.2 խիստ նկատողություն (գրավոր)
  - 5.1.3 խիստ նկատողություն՝ վերջին նախազգուշացմամբ (գրավոր)
  - 5.1.4 հեռացում վարժարանից:
- 5.2 պատժի տեսակը որոշվում է տնօրինության կողմից մանկավարժական խորհրդի համաձայնությամբ՝ հաշվի առնելով խախտման վտանգավորության աստիճանը և հետևանքը,
- 5.3 մեկ խախտման համար կարող է կիրառվել միայն մեկ պատժի ձև,
- 5.4 նկատողությունը գործում է ուսումնական 3 ամիս, խիստ նկատողությունը՝ 6 ամիս,
- 5.5 առանձին դեպքերում տնօրինությունն իրավունք ունի հետագայում չեղարկելու տրված նկատողությունը մանկավարժական և աշակերտական խորհուրդների համաձայնությամբ,
- 5.6 Նկատողությունը ձևակերպվում է տնօրենի հրամանով և հայտարարվում վարժարանում, փակցվում սովորողներին տեսանելի վայրում, ծանուցվում նաև ծնողներին,
- 5.7 վարքականոնի 2.4 կետը խախտելու դեպքում սովորողի ծնողը կամ օրինական ներկայացուցիչը գրավոր դիմում են տնօրենին՝ հեռախոսը վերադարձնելու խնդրանքով, կրկնվելու դեպքում Վարժարանն իրավունք ունի այն չվերադարձնել՝ մինչև կիսամյակի ավարտը: